ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«11» հուլիսի 2018 թվական**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն Ա/Ն-1**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

**ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:**

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 25 (քսանհինգ) անդամներ՝** Ս.Բալասանյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյանը, Վ.Եդիգարյան, Ա.Գրիգորյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ա.Տոնոյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյանը, Ա.Մխիթարյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Վարդանյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

**Նիստին հրավիրված են և մասնակցում են՝** համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, ինչպես նաև ՋԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

**ԼՍԵՑԻՆ.**

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 25**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 11-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

2. **ԶՈՀՎԱԾ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՈՒ ՍԱԿԱՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 25**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Զոհված, հաշմանդամություն ունեցող զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքներին, որպես նվիրատվություն, հատկացնել 500.000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ այդ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների ամառային հանգիստը 2018 թվականի հուլիսի 8-27-ը Հանքավանի «Արագած» և «Հեքիաթային կիրճ» ճամբարներում կազմակերպելու նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**
**ԼՍԵՑԻՆ.**

**3. ԱՆԱՀԻՏ ԵՂՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 25**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Անահիտ Եղյանի ընտանիքին, որպես դրամական օգնություն, հատկացնել՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**
**ԼՍԵՑԻՆ.**

**4. ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 25**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Անահիտ Հարությունյանի ընտանիքին, որպես դրամական օգնություն հատկացնել՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական

դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

5. **2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 1 (Հ. Եղիազարյան)**

**ձեռնպահ – 1 (Ս. Մարտիրոսյան)**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. 2017 թվականի ընթացքում աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ պատրաստած գյումրեցի մարզիչներին շնորհել դրամական պարգևներ՝ 7.644.000 (յոթ միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝
   1) սույն որոշման 1-ին կետում նշված գումարից 3.822.000 (երեք միլիոն ութ հարյուր քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամի վճարումը կատարել 2018 թվականի հուլիս ամսին, իսկ մնացած 3.822.000 (երեք միլիոն ութ հարյուր քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամի վճարումը կատարել 2018 թվականի դեկտեմբեր ամսին,
   2) սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**6. 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՐՁԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 25**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. 2018 թվականի աշխարհի և Եվրոպայի առաջնություններում չեմպիոն դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 3.950.000 (երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի

հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**7. «ՖՐԱՆԿ ՄՅՈՒԼԼԵՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 25**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08062018-08-0004) Գործարանային փողոց N 2/6 հասցեի 4658,07 (չորս հազար վեց հարյուր հիսունութ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի բնակելի գործառնական նշանակության 0,1432 (զրո ամբողջ մեկ հազար չորս հարյուր երեսուներկու տասհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը 99 (իննսունինը) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ֆրանկ Մյուլլեր» ընկերությանը՝ արհեստագործական կենտրոնի վերածելու նպատակով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ ՓՈՂՈՑ N 47/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ «ՕՅՈՒՆՋՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 25**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Մհեր Մկրտչյան փողոց N 47/6 հասցեի 0,12879 (զրո ամբողջ տասներկու հազար ութ հարյուր յոթանասունինը հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 99 (իննսունինը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել Հիմնադրամին՝ համերգասրահ կառուցելու նպատակով՝ Հինադրամի կողմից Գյումրու ժողգործիքների պետական նվագախմբի համար նոր շենք ձեռք բերելու պայմանով:
2. Սահմանել, որ.
   1) Հիմնադրամի կողմից համերգասրահի կառուցման շինարարական աշխատանքները կարող են սկսվել սույն որոշման 1-ին կետում նշված պարտավորությունը Հիմնադրամի կողմից կատարելուց հետո,

2) համերգասրահի շինարարական աշխատանքների առաջին փուլը իրականացնել հողամասի կառուցապատումից ազատ տարածքում,
3) ամբողջական կառուցապատմանը ներկայացվող մյուս պայմաններն ու պահանջները մանրամասնել Գյումրի համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ և հողամասի անհատույց օգտագործման տրամադրման վերաբերյալ պայմանագրով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 25**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Վավերացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի և «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից 2018 թվականի հունիսի 29-ին ստորագրված համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 25**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

**11. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍՏԵՓԱՆ ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ»» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 25**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Տալ համաձայնություն՝ կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմենուհի Հենրիկի Մանուկյանի թեկնածությանը (ծնված՝ 28 փետրվարի 1984

թվական, անձնագիր՝ AP 0633173, տրված՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանության 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Անդրանիկ Խաչատրյան տուն 52,սոցքարտ N 7802840805):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամներ**

Ս. Բալասանյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա.Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ա. Մխիթարյան _____

Ս.Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Վարդանյան _____

Գ. Մաթևոսյան

Հ. Պողոսյան

Ա. Առաքելյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԱՆՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**քաղաք Գյումրի**
**«11» հուլիսի 2018թվական**